ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***26.12.2017 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 52-ը:

Մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետ տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Ջեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի մասին:
   /Ջեկ. Վարդանուշ Մնացականյան – մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

3. Այլ հարցեր:

Հայտարարությունով հանդես եկավ՝

Վանիկ Հարությունյանը - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Բոթոյանը:

1. Առաջարկվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել 2017 թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ և աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ.

2) 2018 թվականի համայնքային բյուջեները պլանավորելիս նախատեսել 2017 թվականի համեմատ սեփական եկամուտների 20-ից 25 տոկոս աճ.

3) 2018 թվականի համայնքային բյուջեները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում.

4) 2018 թվականի հունվարին ավարտին հասցնել մարզի խոշորացված և 5000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի հաստիքացուցակով 2018 թվականի հունվարի 1-ից նախատեսված տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուի հաստիքում նշանակումների գործընթացը և հետևել նրանց վերապատրաստման գործընթացին:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ